

րեանց աշխարհին, եւ դարձուցաներ զնոսա յընդանութիւնս. զի պառակտեալք եւ քակտեալք էին յընդանութենէն եւ յամենայն գործոց Յայոց ի ժամանակս խաւութեանս¹ Տիրանայ: 4 Եւ կացոյց արքայն զՎարդան զերեց եղբայրն ի Նահապետութեանն ազգին իւրեանց, եւ զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զաւրավարութեան յիրս պատերազմացն. սոյնպէս եւ զկրտսերն ի պետս զաւրացն կացուցաներ: 5 Սոյնպէս եւ զամենայն ազգսն զաւրացն մեծամեծացն Նահապետացն, որպէս առաջին թագաւորքն Նուաճեալք յիւրաքանչիւր չափու: 6 Եւ հնազանդեր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զաւրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Յայոց սահմանապահս կացուցաներ:

7 Եւ Նորոզեցաւ զուարթացաւ տերութիւնն թագաւորութեանն Յայաստան երկրին որպէս եւ զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, եւ գործակալքն յիւրաքանչիւր չափու: 8 Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն ինսամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին: 9 Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զաւրավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ ըռազմիկ ճակատամուղ նիզակին, իրափառն² աղանազգիք աղանադրաւշք արծուէնշանք, վարժնականիշք աներկիւղք քաջասիրտք Նահատակք քաջանունք, բարենշանս բարեհամբաւք բարեգործք յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի Նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զաւրաց զաւրավարութեանն բազմութեանն Յայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգետեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի Նահապետութեան պատերազմի: 10 Եւ այլ յայսմ ազգաց եւ ի խոնարհ՝ որ գործակալս անուն բարծիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թող զՆահապետս մեծամեծս եւ զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարելու բարձ՝ որ մտաներ ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զտոնկայս գործակալութեանն սպասու:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս սրբոյն Ներսիսի, թէ ո՛րպէս կամ ուստի՛ էր, կամ որպիսի՛ կամ զիա՛րդ ընդրեցաւ եպիսկոպոս լինել Յայոց աշխարհին:

2 Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք Նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից եւ դրաւշուց տեարք. ամե-

1 Յոր. խուլութեան

2 Ի չորս օրինակս՝ իրաւափառն